

«Նայրոց-ճնող» համաձայնագիր բարձր առաջադիմության համար

Ի՞նչ է «Նայրոց-ճնող» համաձայնագիրը «Նայրոց-ճնող» համաձայնագիրը բարձր առաջադիմության համար դա պայմանագիր է, որը մշակում են ծնողները, աշակերտները և ուսուցիչները միասին: Այն բացատրում է, թե ինչպես են ծնողները և ուսուցիչները համագործակցելու, որպեսզի բոլոր աշակերտները հասնեն կամ գերազանցեն իրենց համար նախատեսված չափորոշիչները: Արդյունավետ համաձայնագիրը.

- Նշում է դպրոցի բարելավման ծրագրի նպատակները
- Կենտրոնանում է աշակերտի ուսուցման հմտությունների վրա
- Նկարագրում է, թե ինչպես են ուսուցիչները օգնելու են աշակերտներին զարգացնել այդ հմտությունները բարձրորակ ուսումնական ծրագրի և էֆեկտիվ դասավանդման միջոցով բարենպաստ ուսումնական միջավայրում
- Տրամադրում է մեթոդներ, որոնք ծնողները կարող են օգտագործել տանը
- Բացատրում է, թե ինչպես ուսուցիչները և ծնողները տեղեկացնելու են իրար աշակերտի առաջընթացի մասին
- Նկարագրում է ծնողների հնարավորությունները՝ դիտելու, կամավորելու և մասնակցելու դասարանական գործունեությանը:

Համատեղ մշակված

Այս համաձայնագիրը մշակվել է համատեղ աշխատանքի արդյունքում հետևյալ ժողովներին.

- Անձնակազմի ժողով, 10/08/18
- Անգլերեն լեզվի խորհրդատվական կոմիտեի ժողով, 10/09/18
- Ուսուցչական անձնակազմի ժողով, 10/09/18
- Դպրոցի խորհրդի ժողով, 10/11/18

Միջոցառումներ՝ համագործակցություն կառուցելու նպատակով

- “Howdy Day” կողմնորոշում
- Տարեկան Title I ժողով
- Դպրոցի խորհրդի ժողովներ
- Անգլերեն լեզվի խորհրդատվական կոմիտեի ժողովներ
- «Վերադարձ դպրոց» երեկո
- Ծնող-ուսուցիչ հանդիպումներ
- Աշակերտական ժողովներ
- Սուրճ տնօրենի հետ
- Ծնողական սեմինարներ
- Ծնողական կամավորության ծրագիր
- Դպրոցի մասին հարցումներ
- Դպրոցական էքսկուրսիաներ
- «Եզրիպտոսի օր» և «Mustang MATH-ness» երեկո
- Blue & White սպորտ
- Կինոյի երեկոներ, տոնական միջոցառումներ
- Լանչի ակումբներ և Catch-Up սրճարաններ
- Դաշինք առողջ սերնդի գործընկերության համար

Հաղորդակցություն՝ աշակերտի ուսման վերաբերյալ

Մեր դպրոցը ձգտում է պահպանել կանոնավոր երկհոսություն ընտանիքների հետ՝ իրենց երեխաների կրթության մասին: Ծնողների և ուսուցիչների միջև հաղորդակցությունը կարող է ընթանալ ամբողջ տարվա ընթացքում հետևյալ միջոցներով.

- Ծնողական պորտալ/Schoology
- Էլ. փոստ
- Շաբաթական Blackboard ConnectEd հեռախոսազանգեր
- Անհատական հեռախոսազանգեր
- Վեբկայքի նորացումներ
- Էլ. նամակներ, թուղթեր և տեղեկագրեր
- Ծնողների ներգրավման միջոցառումների օրացույց
- Հանդիպումներ ծնողների հետ
- Աշակերտական ժողովներ
- IFP Ժողովներ

«Նայրոց-ճնող» համաձայնագիր

Mount Gleason միջին դպրոց ACS WASC-ի կողմից հավատարմագրված 2018-19

Mount Gleason միջին դպրոցը տրամադրում է Title I աշակերտներին «Նայրոց-ճնող» համաձայնագիր: Այս համաձայնագիրը մշակվել է ծնողների հետ միասին և ուրվագծում է, թե ինչպես ծնողները, դպրոցական ամբողջ անձնակազմը և աշակերտները միասին աշխատում են ակադեմիական առաջադիմության բարձրացման համար: Այն նկարագրում է դպրոցի և ընտանիքների համագործակցելու կոնկրետ ուղիներ, որոնք կնպաստեն երեխաների հասնելուն Պետական ընդհանուր հիմնական չափանիշներին:



10965 Mt. Gleason Avenue

Sunland, California 91040

818-951-2580

www.mtgleasonms.org

Մեր նպատակները աշակերտների առաջընթացի հետ կապված

Շրջանի նպատակներ

1. 100% ավարտում
2. Հմտություն բոլորի համար
3. 100% հաճախելիություն
4. Ծնողի և համայնքի ներգրավում
5. Դպրոցի անվտանգություն

Դպրոցի նպատակներ

1. Բարձրացնել A-G պահանջներին վերաբերող գիտելիքների մակարդակը
2. Մաթեմատիկայի և անգլերենի բարձր մակարդակ SBAC-ի թեստից
3. ELPAC-ի և RI-ի արդյունքների բարձր մակարդակ՝ վերադասակարգվելու նպատակով
4. Ընդլայնել աշակերտների, անձնակազմի, ծնողների և համայնքի ներգրավածությունը
5. Անձնակազմի/աշակերտների հաճախելիությունը՝ 96% և ավելի բարձր

Mount Gleason միջին դպրոցը բաժանվելով երեք դպրոցի և դասավանդում միջոցով բարենպաստ և արդյունավետ դասարանային միջավայրում, որպեսզի երեխաները հասնեն պետական CCSS ակադեմիական չափանիշներին: Մենք աջակցում ենք մեր աշակերտներին և ջանասիրաբար աշխատում ենք դպրոցում բարեհաջող, անվտանգ միջավայր ապահովելու համար:

Ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ

Դասարան

- Mount Gleason դպրոցը ապահովելու է բարձրորակ ուսումնական ծրագրի և ճշգրիտ դասավանդում բարենպաստ ուսումնական միջավայրում, որպեսզի երեխաները կարողանան այնպես սովորել, որ բավարարեն CCSS չափանիշներին: Դա իրականացվելու է հետևյալ կարգով.
- ✓ Գործարկվելու է Ընդհանուր հիմնական չափանիշների գրագիտության և մաթեմատիկայի ծրագրերը, որպեսզի զարգանան գրելու և մաթեմատիկական հմտությունները բոլոր մակարդակների վրա, ներառյալ Անգլերեն սովորողներին և Հատուկ կրթություն ստացողներին:
 - ✓ Դասարաններում իրականացվում է միջամտության մեթոդ՝ ռիսկային աշակերտների համար՝ բազմամակարդակ միջամտության մեթոդների միջոցով:
 - ✓ Ուսուցիչները և օգնականները համագործակցում են PLC-ի ժողովների ընթացքում տվյալների գնահատման և ընդհանուր նպատակների և գնահատումների նախագծման նպատակով ըստ PLC-ի մոդելի և Պետական ընդհանուր հիմնական չափանիշների:
 - ✓ Ուսուցիչները պատրաստվում են MSIS, MyData և Schoology ծրագրերը օգտագործելու համար, որպեսզի իրականացնեն գնահատում, վերահսկողություն և աշակերտի առաջադիմության մասին տեղեկությունների տրամադրում:
 - ✓ Որոշ ուսուցիչները վերապատրաստվելու են READ 180-ում՝ ռիսկային աշակերտներին: մասնագիտացված ուսուցում տրամադրելու համար:
 - ✓ LTEL-ները, ովքեր չեն բավարարում ELPAC-ի վերադասակարգման չափանիշին ստանում են «թիրախային միջամտություն»՝ անգլերենի մակարդակի բարձրացման համար:
 - ✓ Աջակցել սոցիալական-զգացմունքային ուսուցմանը՝ Վերականգնողական արդարադատության և «Աշակերտի ձայնի և ձգտումների» շրջանակների մեջ:

Միասին դեպի հաջողություն

Տուն

- Մենք որպես ծնողներ կապ ենք ունենալու անձնակազմի հետ և աջակցելու ենք մեր երեխաներին ուսման մեջ հետևյալ միջոցներով.
- ✓ Աջակցել պոզիտիվ դպրոցական և համայնքային մշակույթին:
 - ✓ Հսկել հաճախելիությունը և ապահովելով տնային աշխատանքի կատարումը:
 - ✓ Կամավորել Ծնողական կենտրոնում և այլ դպրոցական բաժանմունքներում:
 - ✓ Մասնակցել երեխայի կրթության հետ կապված որոշումների ընդունմանը:
 - ✓ Նպաստել երեխայի ազատ ժամանակի ճիշտ օգտագործմանը:
 - ✓ Տեղեկացված լինել երեխայի ուսման մասին և հաղորդակցել դպրոցի հետ:
 - ✓ Մասնակցել ռազմավարության հարցերով խորհրդատվական խմբերում և հետևել դպրոցի կրթական ծրագրերին:
 - ✓ Մասնակցել «Վերադարձ դպրոց» երեկոյին, «Ծնող-ուսուցիչ» հանդիպումներին, բաց դռների օրերին և այլ միջոցառումներին:
 - ✓ Ակտիվորեն օգտագործել Ծնողական պորտալը՝ հսկելու երեխայի գնահատականները, թեստերի միավորները և այլն:
 - ✓ Հարցնել երեխային ամեն օր սովորածի մասին և արձագանքել «Զարգացման մտածելակերպի» մոտեցմամբ, գովելով ջանքերը և հաստատակամությունը:

Աշակերտներ

Մենք որպես աշակերտներ պատասխանատու ենք մեր ակադեմիական առաջադիմությունը բարձրացնելու և պետական բարձր չափանիշների հասնելու համար: Մասնավորապես, մենք.

- ✓ Անելու ենք տնային աշխատանք ամեն օր, լրացնելու ենք չավարտված հանձնարարությունները և դիմելու ենք օգնության համար անհրաժեշտության դեպքում:
- ✓ Մուտք ենք գործելու դպրոց ժամանակին և չենք ուշանալու դասերից:
- ✓ Գրանցելու ենք «Binder Reminder»-ի օրակարգում բոլոր հանձնարարությունները և ցույց ենք տալու ծնողներին կանոնավոր կերպով:
- ✓ Լինելու ենք միշտ զգույշ, քաղաքավարի և պատասխանատու:
- ✓ Կարդալու ենք առնվազն 30 րոպե ամեն օր արտադպրոցական ժամերին:
- ✓ Փոխանցելու ենք ծնողներին/խնամակալներին դպրոցում մեզ տրամադրված բոլոր ծանուցումները և ամբողջ տեղեկատվությունը:
- ✓ Օգտագործելու ենք Schoology կանոնավոր կերպով՝ հանձնարարությունները, գնահատականները ստուգելու և ուսուցիչների հետ հաղորդակցվելու համար:
- ✓ Ընդունելու ենք ուսման նպատակները որպես աճի հնարավորություն:

Տեսլականը. Mount Gleason միջին դպրոցը կրթական հանրություն է, որը կենտրոնացած է դեռահասներին դեպի ակադեմիական հաջողություններ առաջնորդելու վրա՝ նորարարական մտածողության, խնդիրներ լուծելու կրեատիվ մոտեցման և համատեղ աշխատանքի միջոցով՝ պատասխանատու քաղաքացիներ համայնքի արդյունավետ անդամներ և միշտ ուսումով զբաղվող աշակերտներ դաստիարակելու նպատակով: